Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N12 հիմնական դպրոց

Թեմա՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասին՝ որպես ուսումնառության արդյունավետության բարձրացման միջոց

Վերապատրաստող, մենթոր՝ Փիրուզա Սարգսյան

Ուսուցիչ՝ Թագուհի Հարությունյան

Վաղարշապատ 2023

Բովանդակություն

Ներածություն----------3

Թեմա 1.ՏՀՏ գործիքների գործնական նշանակությունը--- 6

Թեմա 2. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում----------8

Հավելված----------14

Եզրակացություն----------19

Օգտագործված գրականության ցանկ----------20

Ներածություն

«Առանց նորին ձգտելու, չկա կյանք,

չկա զարգացում, չկա առաջընթաց» :

Բ.Գ.Բելինսկի

Կրթության որակի ապահովումը հանրակրթության բարեփոխումների գերակա խնդիրն է: Կրթության բարելավումը սկսվում է դպրոցից: Սա նշանակում, որ արդի շրջանի մանկավարժը պետք է պատրաստ լինի նոր հնարքների, միջոցների, տեխնոլոգիաների կիրառման, ակտիվորեն արձագանքի տեղի ունեցող փոփոխություններին և ճկուն կերպով հարմարվի նոր պայմաններում աշխատելուն, այսինքն պետք է մշտապես ինքնակատարելագործվի և զբաղվի ինքնակրթությամբ: Արդի ժամանակաշրջանում կրթության համակարգում նշանակալի փոփոխություններն են տեղի ունենում, ձևավորվում են նոր մոտեցումներ, ստեղծվում է նոր մշակույթ: Թվարկվածն անմիջականորեն ազդում է մանկավարժի և ուսուցչի գործունեության վրա: Շ. Ա. Ամոնաշվիլին իր <<Նպատակի միասնությունը>> աշխատանքում նշում է ուսուցիչ մասնագետի կարևորագույն հատկանիշները՝ ունենալ գործունեության մանկավարժական դիրքորոշում և տիրապետել դրա իրականացման մեթոդիկային, մշտապես փնտրել ուսուցման և կրթման խնդիրների լուծման լավագույն ուղիներ, ունենալ լայն մտահորիզոն, լինել բարյացակամ և միաժամանակ սկզբունքային: Եթե նախկինում ընդունվում էր <<Կրթություն ողջ կյանքի համար>> դրույթը, ապա ներկայումս այն փոխարինվել է <<Կրթություն ողջ կյանքի ընթացքում>> մոտեցմամբ: Ուսուցիչը պետք է աչքի ընկնի գիտելիքի մեծ պաշարով, ունենա փորձարարական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ, մշտապես անդրադառնա նոր տեխնոլոգիաների կիրառմանը՝ միաժամանակ արագ լուծումներ տալով տարբեր խնդիրների: Կրթական համակարգի տեղեկատվայնացումը և ՏՀՏ-ների կիրառումը ուսումնական գործընթացում կրթության բովանդակության բարեփոխումների հիմքն են:

Այսօր տեղեկատվական տեխնոլոգիաներն ակտիվորեն թափանցում են մարդկային գործունեության ոլորտ, ապահովում հասարակության ներսում տեղեկատվական հոսքերի տարածումը և այդպիսով ձևավորում համաշխարհային տեղեկատվական տարածություն: Անշուշտ, ազդելով հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա՝ վերջիններս չեն կարող չանդրադառնալ կրթական համակարգի վրա: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների թափանցումը կրթության ոլորտ թույլ է տալիս որակական փոփոխությունների ենթարկել ինչպես ողջ կրթական համակարգը, այնպես էլ ուսուցման բովանդակությունը, մեթոդները և կազմակերպման ձևերը: Ըստ Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2016-2025թթ. պետական նախագծի՝ կրթության զարգացման գլխավոր նպատակն է կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուր քաղաքացու կյանքի բոլոր փուլերում հնարավորություն է տալիս ստանալու իր պահանջմունքներին, մտավոր կարողություններին ու ձգտումներին համապատասխան որակյալ կրթություն, բավարարում է տնտեսության ու հասարակության պահանջները, լիարժեք ծառայում է ազգային շահերին: Ընդ որում՝ կրթության որակի բարելավման քաղաքականությունը պետք է զուգորդվի կրթական ծառայությունների մատչելիության բարձրացման և կրթության մեջ առավելագույն ընդգրկվածության ապահովման ծրագրերով: Առավելապես կարևորվում են՝

1. հանրակրթական ուսումնական հաստատություններում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումը,

2. ՏՀՏ կրթական ծրագրերի բարելավումը:

<u>Հետազոտության արդիականությունը.</u>

Հետազոտության այս թեման պատահականորեն չեմ ընտրել: Ընտրել եմ այնպիսի թեմա, որն իմ աշխատանքային գործունեության ընթացքում դարձել է հիմնախնդիր, և ուզում եմ ներկայացնել իմ դասավանդած դասարաններում դրա կիրառման սեփական փորձը, առաջարկել լուծման ուղիներ, խաղային հնարներ:Կարծում եմ՝ այն արդիական է բոլորիս համար: Աշխատանքային փորձս ցույց է տվել, որ ուսուցանվող թեմաների ուսումնասիրման ընթացքում գրեթե բոլոր սովորողների մոտ էլ առաջանում են դժվարություններ, քանի որ հարկավոր է լինում մտապահել կարճ ժամանակահատվածում տրվող մեծ քանակությամբ տեղեկություն:

<u>Հետազոտական աշխատանքի նպատակը.</u>

Հետազոտական աշխատանքի նպատակն է նոր նյութը մատուցումը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ՝ ուսուցման և ուսումնառության արդյունավետությունը մեծացնելու համար:

Այստեղից էլ բխում են ՏՀՏ-ների օգտագործման նպատակները.

● բարձրացնել սովորելու մոտիվացիան /շարժառիթը/
● մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը
● նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը
● բարելավել դասի անցկացման մեթոդները
● ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները
● պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը
● օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց
● արագ և որակյալ պատրաստվել դասին:

<u>Հետազոտական աշխատանքի խնդիրները.</u>

Վերոգրյալի համաձայն սահմանվում են հետազոտության հետևյալ խնդիրները.

- գտնել, ուսումնասիրել այս թեմայի շուրջ եղած գիտական գրականությունը, էլեկտրոնային ռեսուրսներն ու առցանց խաղերը,
- ընտրել, մշակել, համակարգել հիմնական դպրոցում կիրառելի ՏՀՏ ռեսուրսները և փորձառությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Առաջարկված խնդիրների լուծման նպատակով օգտագործվել են հետազոտման հետևյալ մեթոդները.

- համացանցի ու գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և տեսական ու գործնական վերլուծություն,
- դասալսումների միջոցով հիմնական դպրոցի ուսուցիչների աշխատանքի փորձի ուսումնասիրում և վերլուծում,
- մանկավարժական հետազոտման մեթոդներ՝ դիտում, հարցում, անկետավորում,
- էլեկտրոնային թեստեր, քարտեր, տնային հանձնարարություններ, ինքնուրույն և խմբային աշխատանքներ,
- դիդակտիկ խաղեր:

<u>Հետազոտական աշխատանքի գործնական նշանակությունը.</u>

Հետազոտության գործնական նշանակությունն է ցույց տալ, որ ՏՀՏ-ով անցկացվող դասերն ավելի արդյունավետ են, հետաքրքիր և դյուրըմբռնելի: ՏՀՏ դասերի ժամանակ աշակերտներն ավելի ուշադիր են և ակտիվ մասնակցություն են ունենում դասապրոցեսին: Եվ առաջարկվող էլեկտրոնային գործիքների կիրառումը կարող են լավագույնը համարվել նաև սկսնակ ուսուցիչների համար:

ԹԵՄԱ 1. ՏՀՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԻՆ

ՏՀՏ-ի սրընթաց զարգացումն արդի ժամանակաշրջանում բնականաբար նոր պահանջներ է դրել նաև կրթական համակարգերի առջև ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում:

ՏՀՏ-ները դարձել են որակյալ և արդիական կրթության հրամայական ու ուսուցման նորարարական գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք անչափ գործունակ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալմանը, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, ստանալ անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև կիրառել ժամանակակից ուսուցման, գնահատման ու ինքնագնահատման մեթոդներ: Դրանք նպաստում են մանկավարժների աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու ՏՀՏ հմտությունների զարգացմանը: ՏՀՏ-երը հնարավորություն են ընձեռում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռք բերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոփոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ:Ի վերջո ՏՀՏ-ները թույլ են տալիս դասվանդողին ու սովորողին հաղորդակցվել միևնույն միջավայրում և նույն «լեզվով»: ՏՀՏ-ներն ունեն նորարարության զարգացումն արագացնելու, սովորողների գիտելիքները հարստացնելու ու խորացնելու, հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց մոտիվացիան բարձրացնելու և ուսման մեջ արդյունավետ ներգրավելու ներուժ: Դրանք բարելավում և կատարելագործում են ուսումնական գործընթացը և օգնում դպրոցներին վերափոխվել: Էլեկտրոնային ուսուցումը կարող է շոշափելիորեն ավելացնել սովորողների գիտելիքները, որի միջոցով մասնակիցները գործնական փորձ ու գիտելիք են ստանում համացանցից: ՏՀ տեխնոլոգիաների արդյունավետ ներդրումը ուսումնական գործընթացը դարձնում է ավելի բազմաբնույթ (դիվերսիֆիկացված)՝ դրանով իսկ բավարարելով յուրաքանչյուր սովորողի անհատական պահանջմունքները:

Օրինակ՝ որոշ սովորողների համար ավելի արդյունավետ է դասախոսություն լսելը, մյուսների համար՝ լուսատախտակով ներկայացմանը հետևելը, տեսանյութեր դիտելը և այլն: Բացի այդ՝ ՏՀ տեխնոլոգիաների ներդրումը թույլ է տալիս ամբողջ դասարանի հետ աշխատանքից (ֆրոնտալ դասավանդում) անցում կատարել փոքր խմբերի հետ աշխատանքին, աշխատել ոչ միայն ուժեղ, այլև թույլ աշակերտների հետ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ համակարգչով աշխատելիս դանդաղաշարժ աշակերտները երկու անգամ ավելի շատ են արժանանում ուսուցչի ուշադրությանը: Էլեկտրոնային ուսուցումը սովորողներին նոր հմտություններ և որակավորում ստանալու, նոր ուղղություններով զարգանալու հնարավորություն է ընձեռում:

Էլեկտրոնային ուսուցման միջավայրեր ապահովող շատ ծրագրային հարթակներ կան: Դրանց շարքում կան և՛ կոմերցիոն նպատակով, և՛ ազատ օգտագործման համար նախագծված համակարգեր: Տեխնոլոգիաները մեզ հնարավորություն են տալիս ուսումնական նյութը ներկայացնել զանազան ձևերով, և հենց դրանով է ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ դառնում: Ուսուցիչներն այս դեպքում խնայում են ոչ միայն ժամանակ, այլև հիմնարար, խորացված գիտելիք են տալիս աշակերտին, որը կպահպանվի հիշողության մեջ: Ուսումնական գործընթացում ՏՀՏ գործիքների կիրառումը նոր մակարդակի կբարձրացնի ուսումնառության որակը՝ ապահովելով բոլոր սովորողների համար տարատեսակ էլեկտրոնային ռեսուրսների, համակարգչային սարքերի և համացանցային կապի հավասար մատչելիությունը: ՏՀՏ հասկացությունը ներառում է բոլոր այն միջոցները, որոնք ծառայում են տեղեկատվության ստեղծման, պահպանման, մշակման և զանգվածային լսարանին փոխանցման համար: Այսօր տեղեկատվության զանգվածային տարածման անկյունաքարը համարվող համացանցը պարունակում է բազմաթիվ կրթական պորտալներ տարբեր տարիքային խմբերի և կրթական կարիքների համար, էլեկտրոնային բառարաններ ու հանրագիտարաններ, տեսալսողական նյութեր և այլ ուսումնական ռեսուրսներ: Հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն, այլ նաեւ գիտակից քաղաքացի ձեւավորելն է, ով կկարողանա կողմնորոշվել ժամանակակից աշխարհում: Զարգացած երկրները վաղուց են համոզվել, որ առանց կրթության մեջ հաղորդակցական տեխնոլոգիանրի կիրառության այսօր գրեթե անհնար է հասնել այդ նպատակներին: Հայաստանում ևս կրթական գրեթե բոլոր փաստաթղթերում կարևորվում եւ խրախուսվում է ՏՀՏ կիրառությունը դպրոցներում,ուսումնական պլաններում ամիսը մեկ անգամ նախատեսված են տեխնոլոգիաների ներգրավմամբ դասեր բոլոր առարկաներից:

ԹԵՄԱ 2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Յուրաքանչյուր ուսուցիչ և աշակերտ պետք է գիտակցի, որ ՏՀՏ – ի միջոցով կարելի է ստուգել գիտելիքը, ինքնակրթությամբ զբաղվել: Սակայն անհրաժեշտ է հասկանալ, որ նորագույն տեխնոլոգիաների արդյունավետությունը երևում է դրանց օգտագործման արդյունավետության արդյունքում: Եթե դրանց օգտագործումը չի հանգեցնում կրթության որակի բարձրացմանը, ապա դրանք անիմաստ և ձևական են դառնում: Իսկ արդյունավետության բարձրացման առաջին աստիճանը համակարգչային գիտելիքներ ունենալն ու դրանք հավուր պատշաճի գործածելն է, գիտելիքների անընդհատ կատարելագործումը, լրացումն ու կիրառումն է: Նորագույն մեթոդներով ու տեխնոլոգիաներով դասեր վարելը այսօր մանկավարժական–մասնագիտական գիտելիքներից բացի պահանջում է նաև տեխնոլոգիական գիտելիքներ: Կարևոր է դիտարկել, որ ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով վարած դասերը հնարավորություն են տալիս ընդլայնելու ուսումնական նյութի ծավալը: Օրինակ՝ համակարգչի առկայությունը թույլ է տալիս որոնելու լրացուցիչ նյութեր գրողների կյանքի, նրանց կենսագրությանն առնչվող մարդկանց, վայրերի մասին, բանաստեղծությունն ուսումնասիրել երաժշտության ուղեկցությամբ,դիտելու վավերագրական ֆիլմեր, գրողների ստեղծագործությունների հիման վրա նկարահանված ֆիլմեր («Պեպո», «Ջրհորի մոտ»,«Ես միշտ ձեզ հետ եմ, ձեր մեջ» . . .), պատրաստել սահիկաշարեր տարբեր թեմաներով, լուծել և կառուցել բազմապիսի թեստային առաջադրանքներ, ստեղծել խաղ-վարժություններ և կատարել նախագծային աշխատանքներ (սովորողները կարող են լինել գրողների ծննդավայրերում, տուն-թանգարաններում, կազմակերպել հանդիպումներ գրողների կենսագրությանը գիտակ անձանց, նրանց հետնորդների (թոռ, ազգական) հետ, կատարել նկարահանումներ): Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը մեծ փոփոխություններ է բերել կրթության մեջ, ինչը վկայում են ուսումնական միջավայրի,ուսուցման բովանդակության, ուսուցման ձևի և այլնի

փոփոխությունները: Շատ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ ժամանակակից տեխնոլոգիաները կարող են բարելավել կրթության արդյունքները: Պլանավորած դասերի ու տեխնոլոգիայի կիրառման ընտրությունից ելնելով՝ ուսուցման մեթոդները լինում են ակտիվ և պասիվ: Պասիվ ուսուցման ընթացքում սովորողները միայն դիտում կամ լսում են (յութուբյան ցուցադրում, սահիկներ, էքսկուրսիա): Ակտիվ ուսուցման ընթացքում սովորողը ինքն է կազմակերպում աշխատանքը (հետազոտական աշխատանք, միջոցառում, նախագծային կամ գործնական աշխատանք): Մեր օրերում ավանդական դպրոցի՝ կարդալով սովորելու և խստությամբ սովորողի առջև կարդացածը պատմելու կամ անգիր անելու պահանջը քիչ արդյունք է տալիս: Մեկ անգամ դիտելով կամ լսելով՝ սովորողը կարող է բացահայտել նոր մատուցվող կամ վելուծվող նյութը խորությամբ, ինչին զուցե իր կարդալու ընթացքում ծուլանա ուշադրություն դարձնել:

Ուստի նորագույն տեխնոլոգիաներով ու նոր մեթոդներով հագեցած դասերը կարելի է համարել մեր օրերի ամենակարևոր պահանջը, որը դրված է ուսուցչի առջև:

<u>Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով հնարավոր է.</u>

1. ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը՝համակցելով ուսուցման ավանդական մեթոդների հետ,
2. սովորողների կողմից ուսուցանվող նյութի յուրացման մատչելիությունը և նրանց առաջադիմության ու մոտիվացիայի բարձրացումը,
3. բոլոր սովորողների համար որակյալ և արդիական կրթություն ստանալու հավասար պայմանների ապահովումը՝ ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ազգային փոքրամասնություններին պատկանող, գյուղական, սահմանամերձ ու մեկուսացված բնակավայրերի և այլ խոցելի խմբերի երեխաների համար,
4. դպրոցական տարիքից սովորողներին ժամանակակից ՏՀՏ-ին հաղորդակից դարձնելը, դրանցով աշխատել սովորեցնելը և տեղեկատվության լայն հասանելիությունն ապահովելը,
5. արդի դարաշրջանում խիստ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների զարգացումը սովորողների մոտ, մասնավորապես՝ ստեղծագործ, քննադատական ու համակարգված մտածողության, մեդիագրագիտության, ինքնուրույն սովորելու և հետազոտական աշխատանքներ կատարելու, համագործակցային աշխատանքի և այլ հմտությունների զարգացումը:
6. հայալեզու էլեկտրոնային տարատեսակ ռեսուրսների ստեղծումը և օգտագործումը ուսումնական գործընթացում,

7. դասավանդողների՝ ՏՀՏ պատրաստվածության, գիտելիքների և հմտությունների զարգացումը և նրանց կողմից դասավանդման գործընթացում ՏՀՏ-ի ակտիվ օգտագործման ապահովումը:

ՏՀՏ-ը կարելի է կիրառել հայոց լեզվի և գրականության դասերի տարբեր փուլերում.

Նոր թեմայի ներակայացում.

❖ դասի թեման ներկայացվում է լուսանկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ՝ տեսության համառոտ ներկայացմամբ:Նմանատիպ դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, աշակերտները ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում:

❖ օգտագործվում են կոնկրետ դասերի համար ստեղծված նյութեր՝ համառոտ տեքստ, հիմնական կանոներ, գծագրեր, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ: Նման դեպքերում երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով և հաճույքով են կատարում առաջադրանքները, իսկ ներկայացված նյութը լինում է կիրառական, տեսանելի ու հասկանալի:

Աշակերտի անհատական աշխատանք: Ուսուցիչը դառնում է ուղեկից, ով ցույց է տալիս ճանապարհը, բայց ճանապարհի ամբողջ «դժվարությունն» իր վրա չի վերցնում: Աշակերտը ընթացքում ոչ միայն պետք է ապահովի իր ներակայությունը, այլև լինի ակտիվ մասնակից, ջանք գործադրի, ցույց տա իր մոտեցումներն ու ինքը փորձի ճանապարհն առավել գեղեցկացնել,հետաքրքրացնել:Իսկ նորագույն տեխնոլոգիաների միջավայրը երեխաների սիրելիներից է, որը կարելի է և պետք է օգտագործել ի շահ նրանց:Խաղալու փոխարեն ինչու՞ երեխան համակարգչով չպատրաստի հետաքրքիր նյութ դասի թեմայի վերաբերյալ, ինչու՞ իր անհատական ուսումնասիրությունը չանկացնի և ինչու՞ չփորձի ինքը գտնել իր հարցերի պատասխանները:

Գիտելիքի ստուգում.

❖ համակարգչային թեստավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ակտիվացնում է դպրոցականների ճանաչողական գործունեությունը: Հնարավոր է կազմել այնպիսի ստուգիչ թեստեր, որ յուրաքանչյուր աշակերտ ստանա իր ունակություններին ու կարողություններին համապատասխան առաջադրանքներ, որոնք կլինեն մեկ օրինակով:Սա ամենահարմար տարբերակներից է՝ապահովելու շերտավոր ուսուցում:

Բովանդակալից, նոր ու հետաքրիր դասեր անցկացնելու համար հայոց լեզվի և գրականության դասերին ուսուցիչը օգտագործում է ինտերակտիվ գրատախտակ, համակարգիչ, հեռախոս: Այս և նմանատիպ տեխնոլոգիաները օգնության են հասնում աշակերտին ներգրավելու, դասի մեջ ներքաշելու նպատակով: Մեթոդների բազմազանության մեջ նպատակահարմար է օգտագործել նաև խաղային տարբեր

մեթոդները, որոնք կիրառելի են թե՛ նորագույն տեխնոլոգիաներով աշխատելիս, թե՛ ավանդական:
Էլեկտրոնային ուսուցման միջավայրեր ապահովող շատ ծրագրային հարթակներ և գործիքներ կան (Kahoot, Padlet, Quizizz, LearningApps, Google forms, Socrative, Google Classroom, Mind Mup,Office Sway, Play Posit):
Ստորև կներկայացնեմ նորագույն տեխնոլոգիաների և գործիքների մի քանի տարբերակ, որոնցով վերջին տարիներին վարել եմ հայոց լեզվի և գրականության դասերը:
«Microsoft Teams» ծրագիրը հաղորդագրությունների փոխանակման հավելված է՝ աշխատանքային տարածք՝ իրական ժամանակում համագործակցության և հաղորդակցության, հանդիպումների, ֆայլերի և հավելվածների փոխանակման համար: Այս ծրագիրն օգտագործել եմ COVID-19 համաճարակի ժամանակ: «Microsoft Teams»-ի օգնությամբ ուսուցիչը կարող է իր համար լուծել որոշ կարևորագույն խնդիրներ:
Դասի ընթացքում օգտագործված դիդակտիկ նյութերը (սահիկներ,տեսանյութեր և այլն) կարելի է տեղադրել համակարգում՝ աշակերտին հասանելի դարձնելով նաև դասերից հետո: Հարմար է գրականության դասերին կիրառելու համար: Համակարգն ունի հնարավորություն սովորողի ձայնը, տեսախցիկը կարգավորելու համար: Երևում է յուրաքանչյուր մասնակցի մուտքի ժամն ու հանդիպմանը ներկա գտնվելու ժամանակահատվածը: Ծրագիրը տալիս է դասը ձայնագրելու հնարավորություն: Զրուցարանի միջոցով կարելի է դասարանի սովորողներից յուրաքանչյուրին առանձին հաղորդագրություն ուղարկել, կարելի է նաև դիտողություն անել, երբ կա դրա անհրաժեշտությունը: Եթե ուսուցիչը չի ուզում սովորողին դիտողություն անել դասի ընթացքում կամ ընկերների ներկայությամբ, կարելի է տալ առանձին ցուցում կամ աշխատանքն ուղղորդող ուղղություն: Զրուցարանում գրված նամակները հասանելի են նաև դասից հետո: Սա հնարավորություն է տալիս զրուցարանում տեղադրել տնային աշխատանքի պահանջները, տեսանյութերի հղումները: «Microsoft Teams»-ում կարելի է ստեղծել առանձին խմբեր ու նրանց հետ համապատասխան աշխատանք տանել:
Google Slides-ն էլեկտրոնային ցուցադրության ընտիր գործիք է, որով կարելի է ստեղծել ու ներկայացնել ազդեցիկ շնորհանդեսներ:
AnswerGarden գործիքը, որը մտքերի տարափ կամ մտագրոհ մեթոդի համար կարելի է կիրառել:
Padlet-ն առցանց գործիք է, առցանց գրատախտակի սահիկաշար, որը հանդիսանում է համագործակցային աշխատանքի տիրույթ:
Play Posit-ը կիրառելի է որպես հեռավար դասընթացի կիրառման միջոց, այն հարթակ է,որտեղ կարելի է ներբեռնել վիդեոն և պատրաստել հարցաշար տվյալ նյութի շուրջ: Օրինակ՝https://app.playpos.it/player_v2?type=share&bulb_id=1260529&lms_launch=false
Wordwall դասընթացը ավելի հետաքրիքր դարձնելու համար կարելի է այս գործիքով կազմել և կիրառել՝ հետաքրքրաշարժ, ինքնատիպ և անհատական առաջադրանքներ:

Socrative-ը թեստեր ստեղծելու, որոնելու և տարածելու, ինչպես նաև թեստեր անցկացնելու գործիք է: Առավելություններից հարկ է նշել զարգացման հեշտությունը և հաճելի տեսքը:

Kahoot-ի միջոցով հնարավոր է.

❖հարցերի մեջ տեղադրել նկարներ, գծագրեր, աղյուսակներ,

❖հարցերն ընտրել ըստ բարդության աստիճանի,

❖հարցերին ավելացնել նկարագրություններ, տեսահոլովակ,

Օրինակ՝ https://create.kahoot.it/details/671f506f-fd2c-4d1a-833d-bde26397fed8

Quizizz-առցանց գործիքը հնարավորություն է տալիս

❖ միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի հարցերից կազմված վարժություններ

❖ պատրաստի վարժությունները խմբագրել,առցանց պահպանել

❖ առցանց հետևել սովորողների առաջադիմությանը

❖ տարածել պատրաստի վարժությունների հղումները

❖ յուրաքանչյուր հարցի համար ժամանակ սահմանել

❖ հրապարակման համար ընտրել լեզուն և սահմանել հասանելիության աստիճանը:

Օրինակ՝

https://quizizz.com/admin/quiz/60935d8512ba2c001b553a54/%D5%BA%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B5%D6%80-%D5%BD%D6%87%D5%A1%D5%AF-%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D6%82%D5%B4?createdByMe=true&searchLocale=

LearningApps առցանց գործիքը հնարավորություն է տալիս.

❖ ստեղծել առցանց խմբեր (դասարաններ) և տալ համապատասխանաբար առանձին հանձնարարաություններ

❖ ստեղծել առցանց խմբեր (դասարաններ) և տալ համապատասխանաբար առանձին հանձնարարաություններ

❖ տարբեր թեմաներով և ձևաչափերով ստեղծել առցանց ինտերակտիվ վարժություններ՝ վերբեռնելով տարբեր ֆորմատների ֆայլեր

❖ տարածել ստեղծված առցանց վարժությունները հղման և QR կոդի միջոցով

❖ հեշտությամբ խմբագրել պատրաստի թեմատիկ վարժությունները

❖ այս տիրույթում համագործակցել գործընկերների և սովորողների հետ

❖հնարավոր է իրականացնել առցանց քվեարկություններ, նոթատետրում գրառումներ կատարել

❖ «օրացույց» գործիքը հնարավորություն է տալիս այս տիրույթում աշխատել անգամ չգրանցված մարդկանց հետ

Իմ էջում կան վարժությունների բազմաթիվ օրինակներ, որոնցից մեկը ներկայացնում եմ ստորև՝

https://learningapps.org/10424147

Google Classroom-ի հիմնական առանձնահատկություններն են՝

❖ հայտարարություններ փակցնել. Google Classroom-ի առաջին էջում կարող են լինել ողջույնի խոսքեր,հայտարարություններ, առաջադրանքների հիշեցումներ,

գնահատականների գրառումներ կամ ցանկացած հաղորդագրություն, որն անհրաժեշտ է հաղորդակցվելու համար

- ❖ անցկացնել թեստեր և վիկտորինաներ
- ❖ ծառայել որպես փաստաթղթերի գրադարան/պահոց:
- ❖ առաջադրանքներ կատարել

Google Meet-ը վիդեոկոնֆերանսներ կազմակերպելու գործիք է, որն այժմ անվճար է բոլոր նրանց համար, ովքեր ունեն Google օգտահաշիվ:Այն շատ հարմար է հեռավար համաժամանակյա դասեր անցկացնելու համար: Հանդիպումների տևողությունը սահմանափակված չէ և կարող են նմասնակցել մինչև 100 անձ:

Ահա այս էլեկտրոնային հարթակներն ու գործիքներն օգնում են բարձրացնել շրջապատող աշխարհի իմացության հնարավորությունները, ստեղծում են պայմաններ ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման համար և ժամանակի ու տարածության ընկալման մեջ ծառայում են որպես արդյունավետ հաղորդակցման միջոցներ:

Հավելված

5 քայլով դասի պլան

Առարկա՝ Մայրենի
Դասարան՝ Vդ
Դասի թեմա՝ Հ.Սահյան «Արագիլները»
Ուսուցիչ՝ Հարությունյան Թագուհի

Դասի նպատակը՝ զարգացնել լեզվական կարողություններ, ձևավորել հայրենիքի և բնության նկատմամբ սեր և հոգատարություն

Դասի ավարտին սովորողը

կիմանա՝
- տեղեկություններ Համո Սահյանի մասին
- բանաստեղծության հիմնական գաղափարը
- նորածանոթ բառերի բացատրությունը

կկարողանա՝
- ներկայացնել բանաստեղծության հիմնական ասելիքը
- հասկանալով, առոգանությամբ և ճիշտ ընթերցել բանաստեղծությունը
- առանձնացնել բանաստեղծության հիմնական միտքն արտահայտող բառերն ու բառակապակցությունները
- գրավոր-բանավոր շարադրել բանաստեղծության բովանդակությունը
- կատարել բառային աշխատանք
- գնահատել հայրենի բնօրրանը
- ինքնուրույն որոնել, գտնել տեղեկություններ չվող թռչունների մասին,ներկայացնել ընկերներին
- Հոգ տանել բնակավայրում ձմեռող թռչունների և բնության մյուս արարածների մասին

Միջառարկայական կապ՝ երաժշտություն, բնագիտություն, կերպարվեստ

Անհրաժեշտ նյութեր՝ դասագիրք, ՏՀՏ միջոցներ, գունավոր կպչուն թղթեր, նվագարկիչ, գունավոր մարկերներ

Մեթոդներ՝ մտագրոհ, զրույց, կարճ դասախոսություն, քարտային աշխատանք, քառաբաժան աղյուսակ

1. Դասի սկիզբ

Տնային առաջադրանքների ստուգում, թերությունների շտկում: Հարցերով ամփոփել նախորդ թեման՝«Ու ձայնավորի հնչյունափոխությունը»: Սովորողները կներկայացնեն ու ձայնավորի հնչյունափոխության տարբեր դեպքեր, օրինակ՝*նշաձև*

բառի ու-ն դարձել է գաղտնավանկի ը, գարնանամուտ բառի ու-ն սղվել է, կատվազգի բառի ու-ն դարձել է վ: Կկատարեն վարժություն LearninqApps գործիքով(https://learningapps.org/11670345): Սովորողները կնշեն, թե ինչ հնչյունափոխություն է եղել *աշնանաբույր* բառում, կվերականգնեն անհնչյունափոխ արմատը/ *աշուն*/: Կներկայացնեն աշնանը տեղի ունեցող երևույթներ, որոնցից մեկը թռչունների `տաք երկրներ չվելն է: Կնշեն մի քանի չվող թռչուններ՝ արագիլ, ծիծեռնակ, կռունկ: Սահուն անցում կկատարենք նոր նյութին:

2. Նոր նյութի հաղորդում

Որպես նախաբան՝ ներկայացնել Համո Սահյանի կյանքը PowerPoint գործիքով: Պատմել մի քանի հետաքրքիր դեպք Սահյանի կյանքից, որդու՝ Նաիրի Սահյանի հուշերից. «Հայրս գործի մեջ պարփակված մարդ էր: Երբ դեռ փոքր էինք, այդ ժամանակվանից մեզ համար Թումանյան ու Բակունց էր կարդում, կաթիլ-կաթիլ լցնում մեր մեջ: Իսկ, առհասարակ, նա համարում էր, որ ինչի արժանի ես, դրան էլ կհասնես: Միշտ ասում էր, որ երեխային չի կարելի զոռով տանել ինչ-որ ուղղությամբ. ուր գնալու է, կգնա: Երեւի իր կյանքի փորձից էր ասում: Նա 13 տարեկանից մենակ է եղել ու հասել նրան, ինչին պետք է հասներ»: Այնուհետեւ ուսուցիչը հանձնարարում է լսած և ընթերցած հուշերի հիման վրա Սահյանին բնութագրող նախադասություններ գրել գունավոր կպչուն թղթերի վրա և փակցնել նրա լուսանկարի կողքին: Դիտել արագիլների մասին փոքրիկ տեսանյութ(https://youtu.be/8HRzvuO9Y2Y) և կարդալ «Արագիլներ» բանաստեղծությունը:
Աշակերտներին նախօրոք հանձնարարվել է գտնել և գրել զրույց, առասպել արագիլների մասին:Կկարդան իրենց գրած զրույցները: Կզրուցենք արագիլների , նրանց խնամքի և պաշտպանելու մասին:

3. Ուղղորդված աշխատանք

Նախօրոք ձևավորված խմբերին կբաժանվեն աշխատանքներ, որոնք կկատարվեն «Արագիլները» երգի ուղեկցությամբ/ https://www.youtube.com/watch?v=sopS_PqOpX8/:

I խումբ – **1**. Ինչո՞ւ էին տառապում արագիլները:

2. Ստեղծել հեռանալ բառի «անձնագիրը»:

Իմ անունը՝ հեռանալ_____

Իմ նշանակությունը՝ հեռու գնալ, անջատվել_____

Իմ «հագուստը»՝ 7 հնչյուն, 7 տառ_____

Իմ հնչյունային կազմը ՝ 3 ձայնավոր, 4 բաղաձայն_____

Ես ցույց եմ տալիս ՝ գործողություն_____

Իմ հոմանիշներից՝ մեկնել, գնալ___

Իմ հականիշներից՝ մոտենալ ____

Իմ գործածությունը՝ Երիտասարդը ստիպված հեռացավ հայրենիքից:

Քո կարծիքն իմ մասին՝ Դու տխուր բառ ես, մարդկանց բաժանում ես իրարից:

II խումբ- 1.Ինչո՞ւ էին տագնապում արագիլները:

2. Ստեղծել թռչել բառի «անձնագիրը»:

III խումբ- 1.Ինչի՞ն էին կարոտում արագիլները:

2.Ստեղծել պանդուխտ բառի «անձնագիրը»:

IV խումբ- 1.Ինչո՞ւ և ո՞ւր էին շտապում արագիլները:

2.Ստեղծել հայրենիք բառի «անձնագիրը»:

V խումբ- 1.Ինչի՞ն էին հավատում արագիլները:

2.Ստեղծել փառավոր բառի «անձնագիրը»:

Աշխատանքի ավարտից հետո յուրաքնչյուր խումբ կներկայացնի իր աշխատանքը:

Ձևակերպում ենք բանաստեղծության գաղափարը, այն է՝ հայրենասիրություն: Այս բանաստեղծությունը հայի մասին է,հայի դժվար ճակատագրի մասին: Հայը տառապել է, հեռացել երկրից, տագնապել ու կարոտել հայրենիքը և, ի վերջո, վերադարձել է հայրենիք՝ լուսավոր ապագայի հանդեպ վառ հավատով լեցուն:

4. Ինքնուրույն աշխատանք Quizizz գործիքի օգնությամբ կատարել հետևյալ առաջադրանքը
https://quizizz.com/admin/quiz/6463d012ac745b001dcdb22b/%D5%B0%D5%A1%D5%B4%D5%B8-%D5%BD%D5%A1%D5%B0%D5%B5%D5%A1%D5%B6?qcPublish=true

Պատասխանել հարցերին

1. **Որտե՞ղ է ծնվել Համո Սահյանը:**

ա/ Դսեղ բ/ Լոր գ/ Գյումրի դ/ Էջմիածին

2. **Ի՞նչ է Սահյանի իսկական անուն-ազգանունը:**

ա/ Հմայակ Գրիգորյան բ/ Հմայակ Սահակյան

3. **Ինչպիսի՞ թռչուններ են արագիլները:**

ա/ չվող բ/ ձմեռող

4. **Ինչի՞ն էին հավատում արագիլները :**

ա/ Որ հետ են գալու բ/ բուք արտաշնչող լեռնագագաթներին

5. **Ո՞ր բառերում է ու ձայնավորը հնչյունափոխվել:**

ա/ նշաձև բ/ լուսավոր գ/ նշաձող դ/ ձվաձև

5 . Դասի ավարտ

Քառաբաժան աղյուսակ

Ի՞նչ էի տեսնում:	Ի՞նչ ձայներ էի լսում:
Ի՞նչ էի զգում:	Նոր վերնագիր:

Ելքի քարտերով ավարտել դասը:

https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSdst2LNGS97NlPI0rM-STUOvk0_ePTfGzcJLI2R6-k1_d_gaw/viewform

1. Նշե՛ք երեք բան, որ սովորեցիք:
2. Նշե՛ք երկու բան, որ հետաքրքիր էր:
3. Նշե՛ք մեկ բան, որ չհասկացաք:

Կատարվում է ձևավորող և միավորային գնահատում:

Ստորև ներկայացնում եմ միավորային գնահատման սանդղակը.

1.Կարողանա նշել բանաստեղծության հեղինակին: 2.Կարողանա բանաստեղծությունից դուրս գրել արփի և արեգակ բառերի հոմանիշը: 3.Կարողանա մնաս բարով բառակապակցությունն արտահայտել մեկ բառով:	4-5 միավոր	Նվազագույն մակարադակ

1.Կարողանա բանաստեղծությունը շարադրել արձակ: 2.Բանաստեղծությունից գտնի պատկեր, ձայն, զգացմունք արտահայտող բառերը: 3.Կարողանա ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ արագիլների մասին: 4. Կարողանա գտնել աշնանային, սրել, բքախեղդ բառերում կատարված հնչյունափոխությունը:	6-7 միավոր	Միջին մակարդակ
1.Կարողանա գտնել խոսքի պատկերավորման միջոցները: 2.Կարողանա բացատրել տրված բառերի իմաստը, կազմությունը, ուղղագրությունը և հնչյունափոխությունը: 3.Կարողանա ձևակերպել բանաստեղծության գաղափարը:	8-10 միավոր	Առավելագույն մակարդակ

Տնային աշխատանք՝

1.Հանձնարարել Հ.Սահյանի «Արագիլները» բանաստեղծությունը արտահայտիչ ընթերցել:

2.Բանաստեղծությունից դուրս գրել ան- նախածանց ունեցող բառերը, նշել, թե ինչ են ցույց տալիս դրանք:

3. Գտնե՛լ, թե որ բառերի կազմության ժամանակ է կատարվել ու ձայնավորի հնչյունափոխություն:

Բրդոտ,կարմրախայտ, բվեճ, թմբեր, ըմպանակ, գնացուցակ, ջրամբար, նշանագրություն, տնական,գթալ, ժողովրդական,խճուղի, խմբակային, մրգահյութ, խնկարկել, տրտնջալ, ոսկեգույն, սրել, գրականություն, աշխարհագրական, լրաբեր, ցորենահատ, առվակ, մթնել, դյուրահալ, հնձել:

Եզրակացություն

Փորձը ցույց է տալիս, որ միևնույն նյութը տարբեր դասարաններում ուսումնասիրելու ժամանակ աշակերտները առավել արագ են յուրացնում այն դեպքում, երբ կիրառվել են անհրաժեշտ և համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ շնորհանդեսներ, էլեկտրոնային առաջադրանքներ, էլեկտրոնային խաղ-վարժություններ: Երեխաները նաև մեծ ոգևորությամբ և հետաքրքրությամբ ներգրավվում են այդ առաջադրանքերը պատրաստելու գործընթացում, ինչը նպաստում են նրանց ստեղծագործական մտքի զարգացմանը: Այսպիսով՝ հետազոտության արդյունքում եկանք այն եզրահանգման, որ աշխարհում տեղի ունեցող գրեթե բոլոր գործընթացները տանում են տեղեկատվական հասարակության ձևավորմանը: Այդ գործընթացներից հատկապես կարելի է առանձնացնել տեղեկատվության, գիտելիքների, տեղեկատվական տեխնոլոգիաների դերի բարձրացումը հասարակության կյանքում, հասարակության տեղեկատվայնացումը, տեղեկատվական և հեռահաղորդակցման ոլորտում աշխատողների թվաքանակի աճը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արտադրանքի ծավալի աճը ընդհանուր արտադրության ծավալի մեջ:Անշուշտ, գլոբալ տեղեկատվական միջավայրի ձևավորումը պահանջում է հասարակության յուրաքանչյուր անդամից տեղեկատվական և հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների բավարար իմացություն, որպեսզի վերջինս կարողանա՝

- հաղորդակցվել հասարակության այլ անդամների հետ,
- բավարարել իր տեղեկատվական պահանջները,
- մուտք գործել համաշխարհային տեղեկատվական շտեմարաններ,
- մասնագիտական ոլորտում կիրառել այդ տեխնոլոգիաները և այլն:

Այս ամենի համար պարտադիր պայման է ՏՀՏ-ի ներդրումը կրթության մեջ, որը պետք է լինի անընդհատ, կրթության բոլոր աստիճաններում՝սկսած տարրականից, ինչի արդյունքում հնարավոր կլինի ապահովել՝

- ուսումնական նյութի առավել մեծ ծավալի ուսումնասիրություն,
- նորագույն տեխնոլոգիաների և սարքերի հետ աշխատանքի հմտությունների ձևավորում,
- հասարակության յուրաքանչյուր անդամի մոտ ազգային և համաշխարհային արժեքների հիման վրա նոր արժեհամակարգի ձևավորում և այլն:

Ամփոփելով վերը նկարագրվածը՝ ամրագրենք, որ ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, կարևոր և էական նշանակություն ունի ՏՀՏ–ի կիրառում դասապրոցեսում, որի արդյունքում նյութն ավելի մատչելի և հասկանալի է մատուցվում, բացի այդ աշակերտներին հնարավորություն է տրվում ինքնուրույն ուսումնառության հմտություններ ձևավորել:

Օգտագործված գրականության ցանկ

1.Թոփուզյան Ա. Օ.,Գյուլամիրյան Ջ. Հ.,Պողոսյան Լ. Մ.,Ասատրյան Ս. Մ.,

Անտոնյան Լ. Ա., Ղազարյան Մ. Զ., Տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում, Երևան 2018:

2.https://lib.armedu.am/files/resource/files/2022-12-27/189e63090f602e82d4ec13950680047a.docx

3.https://www.imdproc.am/info/usucichnerin/thtn-usumnakan-gorcyntacum

4.Վ. Օսպեննիկովա «ՏՀՏ կիրառումը դասավանդման մեջ»:

5.Բաղդասարյան Ա., Սարգսյան Մ., ՏՀ տեխնոլոգիաներիդերն ու նշանակությունը հիմնական դպրոցի ուսուցման գործընթացում:

6. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի, հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Էդիթ Պրինտ, 2020:

7.http://publications.ysu.am/wp-content/uploads/2022/09/Ajamoghlyan-ArmenEghiazaryan-Karine.pdf